

Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանի ելույթը Արտակարգ իրավիճակների աշխատողների օրվա առթիվ

05.09.2019թ.

Արտակարգ իրավիճակների նախարարության հարգելի՛ ծառայողներ և վետերաններ, սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի կապակցությամբ:

Ձեզ է վստահված ամենապատասխանատու առաքելություններից մեկը՝ մեր երկրի տարածքում բնական և տեխնածին աղետները կանխելու, դրանց դեմ պայքարելու, հետևանքները կառավարելու և վերացնելու կարևորագույն գործը: Մեր ժողովրդի, օրեցօր ավելացող վստահության պայմաններում այս կառույցի նկատմամբ, անհամեմատ մեծանում է ձեր պատասխանատվությունը: Ինչպես հայ զինվորը առաջնագծում , այնպես էլ հայ փրկարարը թիկունքում երբեմն իրենց կյանքի գնով փրկում են քաղաքացու կյանքը , անձնվիրաբար ծառայում, պայքարում տարերքների դեմ և հաղթում մեծ ջանքերի գնով :

Փրկարարը կոչում է, որը հպարտորեն կրում են նաև մեր մարզային կառույցի աշխատակիցները: Փրկարարի հեղինակությունը մեր երկրում, իր կատարած անձնվեր աշխատանքի շնորհիվ տարեցտարի ավելի է բարձրանում , ինչն իհարկե մեզ շատ է ոգևորում :

Ինչպես գիտեք, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, վերջին ժամանակներս ավելացել են հրդեհները և դրանց ծավալները:

Շնորհակալություն տղաներ, որ Գուգարքի անտառտնտեսության, Ծաղկաշատի անտառպետության ,Պրիվոլնոյե գյուղի,Վահագնաձորի և մի շարք այլ հրդեհներ մեծ ծավալների չեն հասել և մարվել են նվազագույն կորուստների հանգեցնելով: Մի շարք դեպքերում ,օրինակ՝ Վահագնաձորի և Ծաղկաշատի հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցել են տեղի բնակիչներ, անտառտնտեսության աշխատակիցներ, իսկ Պրիվոլնոյե գյուղի հրդեհին նաև ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողներ: Շնորհակալություն նաև ձեզ միասնական ջանք գործադրելու, մեր առաջամարտիկների կողքին կանգնելու, աջակցելու համար : Այսուհետև էլ շարժվեք «մեր հզորությունը մեր հավաքական ուժի մեջ է» կարգախոսով , եղեք զորավիգ և աջակից , եղեք օգնող ,ոչ թե՝ դիտորդ, եղեք մեկ ընտանիքի պես՝ կայուն ու ամուր : Հատուկ ցանկանում եմ անդրադառնալ հուլիսի 29-ի դեպքին,երբ վթարի ենթարկվեց վառելիք տեղափոխող գնացքը: Դեպքի վայր մեկնած հմուտ փրկարարների գործողությունների արդյունքում կանխվեց հնարավոր պայթյունը: Մարզում ծառայությունը հատուկ ուշադրության կենտրոնում է պահում նաև քաղաքացիական

պաշտպանության, քարաթափման և սողանքների, արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրները, ձեռք է մեկնում դժվարին իրավիճակում հայտնված ցանկացած քաղաքացու, իրականացնում է ամենօրյա և ամենժամյա ծառայություն: Ցանկանում եմ առանձնացնել Թումանյան համայնքում տեղի ունեցած սողանքը, ուր մարզային փրկարարական վարչությունը իրականացնում էր շուրջօրյա հերթապահություն, իսկ ապա՝ կանխարգելիչ աշխատանքներ, Մ6-Մարց-Աթան 24-րդ կմ ճանապարհահատվածում սողանքի կանխարգելումը և տասնյակ ու հարյուրավոր այլ օրինակներ, որոնք մեր ուշադրությունից երբեք չեն վրիպում և արժանանում են բարձր գնահատանքի:

Ես առանձնակի կարևորում եմ շարքային ծառայողի աշխատանքը, հրշեջի, փրկարարի նվիրումը իր գործին, հրդեհի մեջ նետվելու պատրաստակամությունը, կյանքի գնով անգամ դիմացինին փրկելու կամքը: Պետական բոլոր բարձր օղակները, Լոռու մարզպետարանը և անձամբ ես միշտ պատրաստ եմք կանգնելու ձեզնից յուրաքանչյուրի կողքին:

Մեր փրկարարական վարչության, հետևաբար նաև մեր մարզի բնակչության համար, շատ կարևոր էր այս տարվա մայիսին մեր վարչության համալրումը 5 հրշեջ ISUZU մակնիշի ավտոբաքերով և մեկ ավտոսանդուղքով: Առաջիկայում ևս ակնկալվում են նոր տեխնիկական համալրումներ և դա կրելու է շարունակական բնույթ:

Կրկին շնորհավորելով Արտակարգ իրավիճակների աշխատողի օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ, որ նույն անձնվիրությամբ, արժանապատվությամբ շարունակեք իրականացնել ձեր ծառայությունը: Մաղթում եմ ձեզ անփորձանք աշխատանք, ձեր ընտանիքներին՝ լույս և երջանկություն: